



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Գ Ի Տ ՈՒ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան

«08» մայիսի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 14-Ա/Ք

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ
ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի նախագահի 2019 թվականի մայիսի 7-ի N 13-Ա/Ք հրամանով հաստատված «Գիտական գործուղման համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի կարգի» 3-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Ստեղծել մրցութային հանձնաժողով գիտական գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտերը գնահատելու նպատակով:

2. Հաստատել՝

- 1) հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելված N 1-ի,
- 2) հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

Ասատրյան Ռուզան	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ԳԳԿ վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)
Հայրոցյան Սարգիս	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ԳԳԿ գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի պետ
Հովհաննիսյան Անուշ	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ԳԳԿ գիտական ծրագրերի իրականացման աջակցության բաժնի պետ
Սարգսյան Հարություն	ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ԳԳԿ գիտական փորձաքննության կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Մ Ր Ց Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի

I. Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Դ Ր Ո Ւ Յ Թ Ն Ե Ր

1. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում ընդգրկված գիտաշխատողների գործուղումների համար ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթի հայտերի (այսուհետ՝ Հայտ) գնահատումն իրականացնում է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի հրամանով ստեղծված մրցութային (գնահատող) հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Ն Պ Ա Տ Ա Կ Ն Ե Ր Ը

3. Հանձնաժողովի նպատակներն են՝

- 1) Հայտերի գնահատումը,
- 2) գործուղման աջակցության նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն տալը:

III. Հ Ա Ն Ձ Ն Ա Ժ Ո Ղ Ո Վ Ի Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Ե Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ Ը

4. Հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

5. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են ըստ դրանց անհրաժեշտության առաջացման:

6. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում է Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդը:

7. Հանձնաժողովի անդամները գնահատում են Հայտը՝ լրացնելով գնահատման թերթիկը (Հանձնաժողովի աշխատակարգի հավելված): Գնահատման թերթիկի յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր՝ 1 միավորի ճշտությամբ:

8. Հանձնաժողովը տալիս է գործուղման աջակցության նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն:

9. Հանձնաժողովի եզրակացությունը կցվում է նիստի արձանագրությանը:

10. Երիտասարդ (մինչև 35 տարեկան) հայտատուներին կարող է տրվել 5 միավոր (20%) խրախուսանք:

11. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է Հանձնաժողովի նախագահի և նիստին մասնակցած Հանձնաժողովի անդամների կողմից:

12. Հանձնաժողովի անդամների կողմից այլ անձանց սույն աշխատակարգով չնախատեսված ձևով պարզաբանումներ և (կամ) մրցույթին վերաբերող այլ տեղեկություններ տրամադրելն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

13. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) վարում է Հանձնաժողովի նիստերը.
- 2) ապահովում է Հանձնաժողովի բնականոն գործունեությունը.
- 3) համակարգում է Հանձնաժողովի աշխատանքը:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

14. Հանձնաժողովի անդամը՝

- 1) մասնակցում է Հանձնաժողովի նիստին.
- 2) լրացնում է գնահատման թերթիկը.
- 3) ստորագրում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.
- 4) կատարում է Հանձնաժողովի նախագահի հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) Հանձնաժողովի անդամ չէ.
- 2) պատասխանատու է Հանձնաժողովին տրամադրվելիք նյութերի նախապատրաստման համար.
- 3) ապահովում է Հայտերի գնահատման թերթիկների պատրաստումը.
- 4) Հայտերը տրամադրում է Հանձնաժողովի անդամներին.
- 5) կազմում է Հանձնաժողովի նիստի արձանագրությունը.

6) համապատասխան փաստաթղթեր կազմելով՝ գրառում է Հանձնաժողովի գործունեությանը վերաբերող տեղեկությունները և ապահովում Հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ փաստաթղթերի անվնաս պահպանումը, իսկ Հանձնաժողովի գործունեության դադարեցումից հետո Հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող փաստաթղթերի պահպանման և սահմանված կարգով արխիվացման նպատակով ապահովում է այդ փաստաթղթերի հանձնումը Կոմիտեի գլխավոր քարտուղարին:

ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայտատուի ազգանուն, անուն, հայրանուն _____

Հ/հ	Չափորոշիչներ	Գնահատական	
		առավելագույն	վերջնական
1.	Գիտական միջոցառման բնութագիր		
	գիտական միջոցառում, որին նախատեսվում է ոլորտի ճանաչված գիտնականների մասնակցություն՝ 5 կամ ավելի երկրներից	5	
	գիտական միջոցառում, որին նախատեսվում է ոլորտի ճանաչված գիտնականների մասնակցություն՝ 3-4 երկրներից	4	
	գիտական միջոցառում, որին նախատեսվում է ոլորտի ճանաչված գիտնականների մասնակցություն՝ 2 երկրից	3	
2.	Գիտական միջոցառման նյութերը հրատարակվելու են		
	WOS և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերականում	5	
	այլ գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված պարբերականում	4	
	գիտաժողովի ժողովածուում	3	
3.	Ձեկույցի բնույթը		
	պլենար զեկույց	5	
	հիմնական զեկույցող	4	
	հրավիրված	3	
4.	Համաֆինանսավորման աղբյուրներ		
	միջոցառման կազմակերպիչ	5	
	այլ	4	
	ՀՀ պետական բյուջեի այլ աղբյուրներ (թեմատիկ ֆինանսավորում, միջազգային համագործակցության ծրագիր, այլ)	3	
5.	Հայտատուի գիտական արդյունավետության բնութագիր *		
	WOS և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում (հումանիտար ոլորտի համար՝ Կոմիտեի հաստատված ցանկում) գիտական հրատարակումների և հրավիրված զեկույցների քանակը 5 կամ ավելի է	5	
	WOS և Scopus միջազգային գիտատեղեկատվական շտեմարանում (հումանիտար ոլորտի համար՝ Կոմիտեի հաստատված ցանկում) գիտական հրատարակումների և հրավիրված զեկույցների քանակը 1-4 է	4	
	վերջին 3 տարիների ընթացքում բարձր վարկանիշով գիտական ամսագրերում հրատարակումներ բացակայում են	3	
Հայտի ընդհանուր գնահատական		25	

* Երիտասարդ (մինչև 35 տարեկան) հայտադրուին 5 միավոր (20%) խրախուսանք

Գնահատող՝ _____

Գնահատման ամսաթիվ